

ԽՈՐԵՆ ՊԱԼՅԱՆ

ՀՈՎՀԱՆ ՕԶՆԵՑՈՒՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ ՇԱՐԱԿԱՆՆԵՐԸ

«Հմուտ և տեղեակ գոլով քերթողական շարագծաց՝ մասանց բանի և մասնականաց, սա ամենայն քաջողջութեամբ վինքն տուեալ՝ աշխատասիրաբար կըրթական ջանիւ վինքն՝ վինէր յերգս հոգևորս...»:

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ

Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո լուսեղեն սյուներից՝ Հովհան Օձնեցուն են վերաբերում Ն. Շնորհալի մեծ Հայրապետի այս տողերը:

Հովհան Օձնեցի Իմաստասեր Հայրապետի բացառիկ անհատականությունը ներբողել են նաև բազմաթիվ մատենագիրներ:

Հայ ժողովրդի անիշխանության դժնդակ մի ժամանակաշրջանում բարձրանալով Լուսավորչի գահին, նրա հովվապետության 11 տարիները եղել են արգասավոր հայ ժողովրդի գոյության և Հայաստանյայց Եկեղեցվո ուղղափառ և ճշմարիտ դավանության պահպանման ի խնդիր՝ մաքառումի և համակ պայքարի տարիներ: Մաքառում՝ որը կուգակցել է իմաստուն Հայրապետի՝ գրով, բանիվ և գործով:

Մեր սույն հոդվածի նպատակն է ներկայացնել բազմարդյուն Հայրապետի գործունեության մեկ այլ բնագավառը, այն է՝ քննության առնել նրան վերագրված հոգևոր երգերն ու շարականները:

Ասենք նաև, որ հավակնություն չունենք նորագույն փաստերով ապացուցելու հիշյալ շարականների հեղինակի հարցը, այլ, հենվելով պատմական հայտնի փաստերի և եկեղեցական ավանդությանց վրա, խոսելու ենք այդ շարականների լեզվաոճական, բառապաշարային և մեղեդային մի քանի առանձնահատկությունների շուրջ:

Հայ հոգևոր երաժշտության պատմության մեջ VII—VIII դարերը տվել են երեք նշանավոր շարականագիր հայրապետներ՝ Կոմիտաս Աղցեցի, Սահակ Ձորափորեցի և Հովհան Օձնեցի:

Նախ անհրաժեշտ ենք համարում, խնդրո առարկա շարականներից բացի, անդրադառնալ մեր շարականների հեղինակներին ընդհանրապես:

Հայտնի է, որ մինչև 13-րդ դար շարականների հեղինակների մասին պատմական հավաստի աղբյուրներ բացակայում են: Ուստի հաճախ, որոշ երգեր, շարականներ և կամ կանոններ ավանդաբար վերագրվել են այս կամ այն հեղինակին:

Սկսած 13-րդ դարից, մի քանի գրիչներ կազմել են շարականագիրների անվանացանկ՝ չափածո կամ արձակ, որոնցում ցույց են տալիս, թե ո՞ր շարականը ո՞վ է հորինել: Այս խմբագրություններում հաճախ հանդիպում ենք տողերի, որտեղ գրիչը երկվություն է դրսևորում այս կամ այն շարականի հեղինակի հարցում:

Մեզ են հասել մի քանի նման խմբագրություններ: Ստորև ներկայացնում ենք Գրիգոր Տաթևացու խմբագրությունն ամբողջությամբ, իսկ մյուսներից քաղվածաբար մեջ կբերենք մուտքի տողերն ու ապա Հովհան Օձնեցուն վերաբերող տողերը: Հիշյալ խմբագրությունները, որոնցից կատարել ենք մեր մեջբերումները, գտնվում են Հ. Անասյանի հայկական մատենագրությունը գրքում[1]:

Գրիգոր Տաթևացու խմբագրությունը գտնվում է Մաշտոցի անվան Մատենադարանի № 813, 818, 855, 856, 918, 3104, 3106 ձեռագիր ժողովածուներում, ինչպես նաև Տաթևացու «Հարցմանց Գիրք»-ի 637—638 էջերում:

«Վասն շարականաց թէ ո՞վ ոք է ասացեալ.

Որք զծորանս հոգւոյն արբին և ի ժամանակս ժամանակս երգեցին յեղանակաւ երգս շարականաց՝ այսոքիկ են.

Նախ Մեծն Մեսրովբ՝ զկարգն Ապաշխարութեան. եւ Սուրբն Սահակ զաւագ շաբաթենն:

Մեծն Մովսէս քերթողն զԾննդեանն և զՄեծացուսցէքն, և զՏեառն-ընդառաջին, և զփոխման առաջին պատկերն: Այլ և զկարգն Շարութեան սորա է ասել Մեծն Վարդան ի տեսութիւն Անթառամ ծաղկին, իսկ այլք ասեն թէ Անանիա Շիրականին է ասացեալ:

Եւ զՊենդակոստէին, և զՎարդավառին, և զսուրբ Գրիգորին, և զՅովաննուն, և զՄարգարէիցն, և զՎարդապետացն, և զԱռաքելոցն, և զթագաւորացն և զԱնտոնին, զայս ամենայն ոմանք Անանիայի տան և ոմանք Խորենացուն:

Զ**Մեղաք** յամենայնին, և զկարգ մեծ տուներին՝ Յոհան Ուձնեցին:

Զհռիփսիմեանց Անձինքն և զիարցն՝ տէր Կոմիտասն: Եւ զԱնսկիզբն՝ Յոհան Մանդակունին, և այլք ասեն թէ Ուձնեցին:

Զհանգստեանն և զմարտիրոսացն, Պետրոս Գետադարձն, և զբաւումս ի մանկանցն:

Զխաչին և զԵկեղեցւոյ՝ Սահակն որ գնաց ընդդէմ Տաճկաց: Զզորս ըստ պատկերին՝ Գրիգոր Մագիստրոսն:

Զաւագ օրհնութիւնքն զէ ձայնին Ստեփանոս Սիւնեցին: Եւ զվառին Ներսէս Կլայեցին, այլև զաղցից Կիւրակէին, և զՆինուէացւոցն, և զԾաղկապարդի հարցն, և զհոգւոյ գալըստեան Դ պատկերն, և զվարդավառի Բ պատկերն, և զփոխման Բ պատկերն, զհրեշտակապետացն, զԵթանասնիցն, զՂևոնդեանցն, զՄարգարէից ԴՁ հարցն, և զՅովհաննու ԴՁ հարցն, զՆորահրաշն, զՆայեա սիրովն, զԻքէն հայցեմքն, զԱրևագալի շարականներն, զօրհնեմք զքեզն, զԱյսօր անճառն, զԱրարչակներն, զԱստուած անեղն, և յոմանց լուաք թէ զսուրբ Յակոբին այլ զայս ամենայն Մեծն Ներսէս է ասացեալ Կլայեցին: Իսկ զԱյսօր յարեաւն, զՆորոգեալ կղզիքն, զԹոռանցն՝ Ներսէս Լամբրոնացին:

Իսկ զԽորհուրդն անճառ, և զՄեծահրաշն Գրիգոր Վկայասէրն: Իսկ զԱրեգականն՝ Գրիգոր Սկեւռացին: Զերգեցէքն՝ տէր Յակոբ Կլայեցին: Եւ զոր Նախիմացն, զի յանուահման ծովէն և զթարգմանչաց օրհնութիւնքն, և զսուրբ Սարգսի օրհնութիւնն՝ Վարդան վարդապետն: Իսկ զՆերսէսին Մեծի, և զԽոտաճարակացն՝ Յոհաննէս Պլուզն:

Եւ զՂևոնդեանց մանկունքն ԴՁ՝ Սարկաւագ վարդապետն որ ի Հաղբատ: Եւ զՍրբութիւն սրբոցն խաչի՝ Ստեփաննոս Սիւնեցին: Այսքան շարականս ընդունելի է յեկեղեցի, և աւելին քան զայս՝ խոտելի է և անպիտան»[2]:

Շարականների հեղինակների մասին մեզ հասած ամենահին աղբյուրը ոմն Սարգիս Երեցի խմբագրությունն է՝ կազմված 13-րդ դարում:

Այդ ձեռագիրը պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում և ունի 2092 համարանիշը[3]:

Յաղագս որոյ, թէ հին և նոր շարականք և երգերն յումմէ ասացան:

Որք զծորանս հոգւոյն սրբոն արբին յիմանալի աղբիւրէն, երգեցին ի ժամանակս ժամանակս...

Զծննդեանն Մովսէս Քերթողն ասաց:

Զփոխմանն առաջի աւուրն, զվարդավառին առաջի աւուրն, զմարգարէից **հինն** մինչ ի մեղաք յամենայնին Յոհան Մանդակունեցին ասաց.

Զմեղաք յամենայնին Յոհան Աւձնեցին ասաց...»[4]:

Հետաքրքիր է նշել, որ Սարգիս Երեցի որոշ վերագրումներ չեն համապատասխանում ինչպես Տաթևացու, այնպես էլ մյուս խմբա-

[1] Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, Ա. հատոր, էջ LXV:

[2] Հ. Անասյան, Հայկ. մատենագիտություն. LXVI—LXVII:

[3] Տես Ցուցակ ձեռագրաց, հատոր I, էջ 717: Ձեռագրերի ուղղագրությունը պահպանել ենք նույնությամբ:

[4] Տես Հ. Անասյան, Հայկ. մատենագրություն, Ա. հատոր, նույն տեղում:

գրությունների վերագրումներին: Ինչպես տեսանք, Սարգիս Երեցը չի նշում ավագ տոները, որոնք մնացած խմբագրություններում նշվում են Օձնեցու անվան դիմաց:

Այս հեղինակի անվանացանկում Զողորմէքն ապաշխ. Բենիկ վարդապետն է ասել. մինչդեռ այդ ողորմյաները մյուս խմբագրություններում միասնաբար վերագրվում են Սաշտոցին:

Սարգիս Երեցը հիշում է նաև Յովհաննէս Գառնեցու անունը իբրև շարականագիր և որին վերագրում է «ԶՅիսուս Միածին քաղցր և Գ. սուրբ հաւրն...» շարականները, որոնք բացակայում են ոչ միայն կանոնական շարականներում, այլ նաև պարականոններում:

Առանձին արժեք է ներկայացնում նաև Սարգիս Երեցի հաճախ մեջբերած **հին** կամ **նոր** հորջորջումը այս կամ այն շարականի մասին:

Այս մասին չենք ուզում ավելի ծավալվել, որովհետև այն մեր նյութից դուրս է:

17—18-րդ դարերից մեզ է հասել նաև մի անանուն խմբագրություն՝ ըստ 1815 թվականին Կ. Պոլսում տպված շարակնոցի. սկսվում է ավանդական դարձած ձևով. «Որք զծորանս հոգւոյն արբին և ընդ ժամանակս ժամանակս երգեցին զեղանակաւոր երգս շարականաց.

Նախ սուրբն Իսահակ և սուրբն Մեսրոպ ասացին զոյթն եղանակաւոր ձայնն և զերկու ձայն ստեղիս:

....Սուրբն Յոհան Ոձնեցի Իմաստասէրն՝ զկարգ մեծ տօնիցն...

....Յոհան Մանդակունին՝ զԱնսկիզբն Բանն Աստուած՝ զհամբարձին, զոր ոմանք Հոձնեցուն տան...»:

Այստեղ չի նշված Օձնեցուն վերագրվող հիմնական հարցի շարականը՝ «Մեղաք յամենայնին», իսկ Հռիփսիմյանց նշանավոր մանկունքը, որը, ի միջի այլոց, նույնպես Անձինք է և բաղկացած է 10 տներից, ոմանք վերագրել են Օձնեցու գրչին: Այդ կարծիքին է նաև Մ. Օրմանյանը[5]:

Ըստ Ստեփաննոս Չիգ Զուղայեցու խմբագրության.

«Ի տէր Ստեփաննոսէ գիտնական քահանայէ ասացեալ սակաւ ոտանաւորս յաղագս շարականաց թէ յումմէ են երգեալ»[6]:

Զուղայեցու այս «Սակաւ ոտանաւոր»-ը գրված է չափածո, գեղեցիկ ու վսեմ հայերենով և բաղկացած է 28 քառատող տներից: Այս ոտանավորի 16-րդ քառատողը վերաբերում է Օձնեցուն:

«Զաւագ տօներն ամենեին
Մեծ Յովհաննէս այն Օձնեցին,
ըզՀռիփսիմեանց զհարցն և զԱնձիքն,
Տէր Կոմիտաս սրբահոգին...»:

Հեղինակի «ամենեին» արտահայտությունը ցույց է տալիս, որ նա Օձնեցուն է վերագրում չորս «Աւագ» տոների ամբողջ երգաշարքը:

Հաջորդ խմբագրությունը պատկանում է Հակոբ Սսեցու գրչին: Եղածների մեջ ծավալով սա ամենաընդարձակն է, բաղկացած է 35 քառատող տներից, չափածո է և իբրև ծայրակապ ունի՝

«Յակոբ վարդապետ Սսցո խնդրէ Յոհան Երեց»: Սկսվում է այսպես. «Ոտանաւոր վասն ցուցանելոյ զերգող շարականացս յոգեալ ըստ նախագիծ տանց»:

Ոտանավորն սկսվում է ըստ Շարակնոցի կանոնների հերթականության, առաջինը հիշատակվում է Հակոբ Սսեցի կաթողիկոսը, որը, ինչպես հայտնի է, հորինել է Աստվածածնի ծննդյան «Երգեցէք որդիք» շարականը՝ իր սարքով: Իսկ Օձնեցու վերաբերյալ քառատողում կարդում ենք՝

«Զչորս աւագ տօնսն Օձնեցին...
Զեւթանասնիցն Կլայեցին...»:

Նախորդ խմբագրությունների համեմատ Սսեցու այս ոտանավորում կան շատ կանոնական շարականներ, որոնք չեն հիշվում նախորդ հեղինակների մոտ:

Մեզ է հասել նաև շարականների հեղինակների մասին մի այլ ոտանավոր՝ որի հեղինակը, ինչպես ցույց է տալիս ծայրակապը, Առաքել Սիւնեցին է: Զարմանալի է, որ Սյունեցին չի հիշատակում Օձնեցու անունը իր 13 տներից բաղկացած չափածո ներբողի մեջ:

«Յառաքելէ Սիւնեաց վարդապետէ շինեալ ոտանաւոր շարականաց արարողաց»[7]:

Ոտանավորի սկզբնատառերը կազմում են՝ «Առաքել վարդապետէ այս բան»: Հարկ ենք համարում մեջբերել մեկ քառատող իբրև նմուշ Սյունեցու վերոհիշյալ ոտանավորից.

10. «Այլ և Յոհան Եղընկացին,
Որ մականուամբ Պլուզ ասին,
Յորս և այլ ոք ի կարգ սոցին,
որ ոչ գիտեմք զանուանս նոցին...»:

Սյունեցին հավանաբար տեղյակ չի եղել նախորդ խմբագրության, որովհետև որևէ պատճառ չկար, որ նա Օձնեցու անունը դուրս թողներ շարականագիրների ցանկից:

Այս հանգամանքը մտածել է տալիս, որ մինչև այս եղել են նաև այլ խմբագրություններ, գուցե ավելի անկատար, քան մեզ հասածները: Պետք է ենթադրել նաև, որ եղած

---

[5] **Մ. Օրմանյան.** Ազգապատում, հտ. Բ, էջ 837:

[6] **Հ. Անասյան,** Հայկ. մատենագիտություն, հատոր Ա, նույն տեղում:

[7] **Մ. Պողարյան**—«Առ. Սիւնեցի և իր քերթուածները», Վենետիկ, 1914, էջ 321:

խմբագրությունները տարածված չեն եղել, այլ դրանք կցվել են այս կամ այն Շարակնոցին միայն և ոչ թե ընդհանրապես բոլոր Շարակնոցներին: Սյունեցու ոտանավորից մեջբերված քառատողի վերջին երկու տողերից երևում է, որ նա հնարավոր է համարում այլ շարականագիրների գոյությունը, սակայն նա չգիտի՝ «կանուանս նոցին»: Ասենք նաև, որ, եթե նախորդ հեղինակներն իրենց արձակ և չափածո ներբողներում շարականների հետ հիշատակում են նաև շարականագիրների անունները, ապա Առաքել Սյունեցին իր ոտանավորում հիշատակում է միայն շարականագիրների անունները, այն էլ՝ պակասավոր: Այսպես, բացի Օձնեցուց, Սյունեցին չի հիշատակում Յովհան Մանդակունու, Սահակ Զորափորեցու, Գրիգոր Վկայասերի, Ներսես Լամբրոնացու, Սարկավագ Վարդապետի, Խաչատուր Տարոնացու, Հակոբ Կլայեցու և այլ շարականագիրների անունները:

Շարականների հեղինակների վերոհիշյալ անվանացանկը որոշակի փոփոխություններով հետագայում վարդարել է նաև մեր տպագիր Շարակնոցների տիտղոսաթերթերը:

Բացի մեր վկայակոչած հեղինակներից, շարականների ու շարականագիրների՝ այդ թվում նաև Հովհան Օձնեցու մասին հետաքրքիր տեղեկություններ են պահպանվել նաև մեր մի շարք մատենագիրների երկերում: Այս տեսակետից խիստ արժեքավոր է 13-րդ դարի պատմիչ Կիր. Գանձակեցու հետևյալ վկայությունը, որը ի մասնավորի վերաբերում է Օձնեցի Հայրապետին.

«Կարգեալ զընթերցուածն սրբոյն Յակովբայ և Կիւրղի և զամենայն տօնսն, որպէս կարգեալ էր սրբոյն Գրիգորի, և տօնեցին ի ԻԵ (25) դեկտեմբերի ամսոյ Դաւթի Մարգարէին և Յակովբայ առաքելոյն, զոր յայլ ազգս ծննդեան տեառն տօնէին, և երգեաց շարական հարցին՝ «Մեղաք յամենայնին և զպատուիրանս քո ոչ պահեցաք, արդ՝ խոստովանիմք առ քեզ», որ մինչև ցայսօր պաշտի յեկեղեցիս հայոց, սկսեալ ի ՃՀԵ (726) թուականէն մինչև ՈՂ (1241) թուականս այժմ յաւուրս մեր է...»[8]:

Գանձակեցու այս տողերից հետևում է, որ Օձնեցին կարգավորել է բոլոր այն տոները, որոնք նախապես սահմանված են եղել Լուսավորչի կողմից:

Սակայն, այդ տոների պաշտման մեջ, Օձնեցու օրոք տեղ էին գտել որոշակի անկարգություններ և անհարապատ ու օտար նորամուծություններ:

Վերոհիշյալ անկարգությունների մասին նախանձախնդիր Հայրապետը հանգամանորեն անդրադառնում է իր նշանավոր «Ատենաբանության» մեջ, ցույց տալով միաժամանակ, որ դրանք ոչ միայն աշխարհիկ, այլև հոգևոր դասի շրջանակներից ներս էին սողոսկել:

Օձնեցին ձգտում է վերացնել այդ օտարամուտ ու խորթ ծեսերը և միակերպություն վերահաստատել հայ եկեղեցիներում՝ Սուրբ Գրքի եղգերի, աղոթքների ընթերցումների ու քարոզների մեջ: Առաքելաշավիղ Հայրապետը պահանջում է Հայաստանյայց Եկեղեցվո հայրապետադրոշմ ազգային նախավանդ ծեսերի ու սովորությունների անխտիր պահպանում և հորդորում է՝ «Կանոնական սահմանադրութեամբ ըստ իւրաքանչիւր գլխոց՝ ստիմնեցուցեալ զանկարգութիւնն քակել և ի բաց հանել յեկեղեցւոյ Աստուծոյ, և փոխանակ նոցա, զվայելուչսն և զօգտակարագոյնսըն ի տեղւոջն արձանացուցանել»[9]: Օձնեցու բարեհորոգչական ջանքերի մասին խիստ արժեքավոր տողեր ունի 10-րդ դարի պատմիչ Հովհ. Դրասխանակերտցին: Վերջինս, կարելի է ասել, միակ մատենագիրն է, որն իր պատմության մեջ երկու էջ տրամադրել է Օձնեցու կյանքին ու գործունեությանը: Նրանից հետո եկող մեր մատենագիրները կրկնել են նրա ասածները:

«Մեծ իմաստասէրն Յովհան, գրով դրոշմեալ տայ Եկեղեցւոյ Քրիստոսի զբովանդակ կարգաւորութիւնս պաշտման ժամուց, գեղեցիկ իմն յօրինուածով ճոխացուցեալ և բացայայտեալ ևս զմիոյ միոյ կարգացն զմեկնութիւնս, ի մխիթարութիւն կղերց եկեղեցւոյ...»[10]:

Բավմարդյուն Հովվապետի հեղինակությանը, նրա բարեհորոգչական ջանքերին անդրադարձել են նաև Ստ. Ասողիկը, Վարդան Արևելցին, Մխ. Այրիվանեցին, Ստ. Օրբելյանը, Գրիգոր Տաթևացին և ուրիշ մատենագիրներ:

Օձնեցու մասին առանձին պատկառանքով է արտահայտվում «Յայսմաւուրք»-ը, որից մենք նպատակահարմար գտանք քաղել այն տողերը միայն, որոնք վերաբերում են խնդրո առարկա չորս ավագ տոների կարգը Օձնեցուն վերագրելու հարցին:

«Կարգեաց զչորեսին տօնսն Կարապետ ծննդեան տօնին ի փառս Քրիստոսի»[11]:

Բավարարվելով Օձնեցուն վերագրվող տոների վերաբերյալ մատենագրական այս վկա-

[8] **Կիր. Գանձակեցի**, Պատմութիւն հայոց, Երևան, 1961, էջ 69:

[9] **Հ. Օձնեցի—«Ատենաբանութիւն»**, ԺԶ:

[10] **Հ. Դրասխանակերտցի**, Պատմ. հայոց, Մոսկվա, 1833, էջ 57—58:

[11] Գիրք որ կոչի Այսմաւուրք ՌՃՀԹ. էջ եճժվ, Ապրիլ ԺԷ:

յակոչումներով՝ այժմ տեսնենք և ծանոթանանք այդ տոների ու նրանց շարականների մի քանի հարցերին:

Ավագ կամ մեծ տոները, որ Հայաստանյայց Եկեղեցին պատշաճ հանդիսավորությամբ կատարում է դեկտեմբերի վերջին շաբաթվա մեջ, ունեն հետևյալ հերթականությունը.

Ա. Կանոն Դաւթի Մարգարէին և Յակովբայ առաքելոյն:

Բ. Կանոն Սրբոյն Ստեփաննոսի Նախավըկայի:

Գ. Կանոն գլխաւոր Առաքելոցն Պետրոսի և Պողոսի:

Դ. Կանոն Որդւոցն Որոտման՝ Սրբոց Առաքելոցն Յակովբայ և Յովհաննու:

Վերոգրյալ այս տոները Հայաստանյայց Եկեղեցին կատարում է իբրև Քրիստոսի հրաշափառ ծննդյան նախորդող տոներ, և, ինչպես տեսանք, Գանձակեցու վկայության համաձայն, դրանք կարգավորվել են Օձնեցու կողմից և 726 թվականից սկսյալ դրվել կայուն գործածության մեջ:

Առաջին տոնը Դավիթ Մարգարեի և Հակովբոս Տյառնեղբայր առաքյալի տոնն է:

Կանոն Դաւթի Մարգարէին և Յակովբայ Առաքելոյն.

Օրհ. ԴՁ. դրձ. ծանր. Յաղթող գըտաւ.. (2 պատկեր 6 տուն):

Հրց. ԴՁ. մեղաք յամենայնի...

Մեծ. ԴՁ. խորանայարկ կամարանըման... (վերափոխման կանոնից է)

Ողորմ. ԴՁ. անըսկիզբն Աստուած լոյս ի լուսոյ...

Տր. ԴՁ. երդուաւ տէր Դաւթի...

Մնկ. ԴՁ-դրձ. Օրհնեցէք ըստէր...

Առաջինն է տոնվում այս տոնը չորս մեծ տոներից, որովհետև Քրիստոս Դավթի ցեղից էր, և, ինչպես տեսնում ենք Ղուկասի ավետարանում, Գաբրիելը Կույս Մարիամին բերած իր ավետիսում ասում է.

«...Եւ տացէ նմա տէր Աստուած զաթոռն Դաւթի հօր նորա և թագաւորեսցէ ի վերայ տանն Յակովբայ ի յաւիտեան...»[12]:

Կանոնի օրհնության, հարցի և մյուս երգերի մեջ շարականագիրը գեղեցիկ ու պարզ լեզվով, հենվելով Սուրբ Գրքի պատմության վրա, պարբերաբար երգում է Աստվածահայր Դավթի և Արդարն Հակովբի աստվածահաճո և ուսանելի վարքի մասին:

Օրհնությունը, որը ԴՁ դարձված է, երգվում է ծանր ու հանդիսավոր:

Պետք է նշել, որ մեկ հասած այդ ԴՁ դարձվածի տարբերակը միակն է Շարակնոցում իր տեսակի մեջ և նման չէ նույն ձայնեղանակի մեկ ծանոթ ո՛չ մի դարձվածի:

Օրհնությունը, ինչպես և մյուս կանոնների օրհնությունները, բաղկացած է վեց տներից: Ուշադրության արժանի է Օրհնության Գ տունը.

«Սա եղեւ գլուխ առաքելոց սըրբոց,
եւ կոչեցաւ եղբայր տեառն ի տանէ Դաւթի.
ըզնա արասցուք բարեխօս...»[13]:

Հայտնի է, որ Դավիթ Մարգարեին տոնակից այս առաքյալը յոթանասնից էր, այս մասին վկայում է նաև «Յայսմաւուրք»-ը՝ ապրիլի 17-ին:

Հակովբոսին ընծայված այս պատիվը՝ իբր «գլուխ առաքելոց», բավականին վեճերի առիթ է տվել: Մեր կարծիքով՝ այն կարելի է բացատրել հետևյալ հանգամանքներով: Նախ՝ նա «Տեառնեղբայր» էր կոչվում, երկրորդ՝ նա կարգվեց իբրև առաջին եպիսկոպոս Երուսաղեմի առաքելահիմն Աթոռի և երրորդ՝ նա եղավ առաքյալների մեջ առաջին նահատակվողը՝ գլխադիր առաքյալը: Բացի այդ, նա առաքյալների կողմից վայելում էր մեծ հարգանք ու պատիվ:

Այս մասին հիշատակություն կա «Գործք Առաքեաց» գրքում՝ Պողոս Առաքյալի Երուսաղեմ գալու առթիվ:

«Ի վաղիւ անդր եմուտ Պաւղոս ընդ մեզ առ Յակովբոս...»[14]:

Այս Հակովբոսին Պողոսը հիշում է նաև Գաղատացվոց ուղղված իր թղթի առաջին գլխում.

«Ապա յետ երից ամաց ելի յԵրուսաղէմ՝ տեսանել զՊետրոս, և եղէ առ նմա աւուրս հնգետասան, զայլ ոք յԱռաքելոց անտի ո՛չ տեսի, բայց միայն զՅակովբոս եղբայր տեառնն...»[15]:

ԴՁ ձայնեղանակի տարբեր դարձվածներով են հորինված նաև կանոնի մյուս երգերը, որոնց մեջ առանձնապես գեղեցիկ է մանկունքի շարականը՝ «Օրհնեցէք ըստէր, յօրհնութիւն ի նոր», որն ունի սահուն և հոգեթով ելևէջներ, գեղեցիկ խաղեր, լայն ու շքեղ հորինվածք՝ հար և նման «Նոր Սիոն», «Կենդանարար Աստուած» ԴՁ շարականներին: Կանոնի հիշյալ մանկունքը համարվում է Երուսաղեմի հայոց Ս. Հակոբյանց վանքի հիմնը:

Բանաստեղծական արվեստի տեսակետից, կանոնի «Ողորմեա»-ն և «Տէր յերկնից» շարականները առանձին գրական արժեք չեն ներկայացնում: «Տեր յերկնից»-ի խոսքերը նույնությամբ առնվել են 132-րդ սաղմոսից և վերածվել երգի: Ահա այն.

[12] Ղուկաս — Ա գլ. 32:

[13] Շարական. Վաղարշապատ, 1888, էջ 60:

[14] Գործք — ԻԱ 18—19:

[15] Գաղատացւոց, Ա գլ. 19:

«Երդուաւ տէր Դաւթի ճշմարտութեամբ և ոչ ստեաց նմա, ի պտղոյ որովայնէ նորա նստուցանել ի յաթոռ նորա...»[16]:

Ասենք, որ քրիստոնեության առաջին դարերում, հոգևոր երգասացության մեջ սաղմոսներից կցորդներ կազմելու սովորությունը խիստ տարածված է եղել, անկասկած, ըստ պատշաճի երգերի բացակայության պատճառով: Ուստի բնավ էլ վարմանալի չէ, որ Օձնեցին ևս կարող էր ապատորեն օգտվել սաղմոսներից՝ կազմելով կցորդներ:

Բ. Կանոն սրբոյն Ստեփաննոսի Նախավըկային.

Օրհնութիւն ԳԿ. Նահատակ բարի...
Հարց ԳՁ. Ընդ երկնային..
Մեծ. ԳՁ. Աստուածածին երկնային...
Ողորմեա ԳԿ. Առաքեա ի մեզ...
Տէր յերկնից ԳԿ. Ով երջանիկ...
Մանկունք ԴԿ. Նախասարկաւագ
Ճաշու շրկ. ԴԿ. «Յընծայ այսօր...

Կանոնի օրհնությունը՝ «Նահատակ բարի», բաղկացած է երկու պատկերից, որոնցից առաջինը ունի ԳԿ ծանր և հանդիսավոր եղանակ, 3 տներից բաղկացած, իսկ երկրորդ պատկերը՝ «Որ ընտրեցար ի կոչումն», նույնպես ԳԿ ձայնեղանակով է հորինված, բայց երգվում է ավելի շարժուն ու հորդոր: ԳԿ.ի այս դարձվածով է երգվում նաև Կանոնի «Տէր յերկնից»-ը՝ «Ով երջանիկ ճառագայթ»: Կասկածից վեր է, որ այս երկու գոհարները պատկանում են միևնույն հեղինակի գրչին:

Կանոնի օրհնությանը կցված է նաև մի երրորդ պատկեր «Առաքեալս նախավկայ» հորինված ԴԿ ձայնեղանակով, բաղկացած 5 տներից: Այս վերջինը, մեր կարծիքով, հորինվել է մեկ այլ շարականագրի կողմից հետագա դարերում:

Գեղեցիկ է Կանոնի հարցը, որն անհրաժեշտ ենք համարում մեջբերել ամբողջությամբ.

ա. ԳՁ. «Ընդ երկնային հոգեղինաց դասսն, այսօր տօնեմք ըղիշատակ սրբոյն Ստեփաննոսի,
բարեբանելով ըղքեզ տէր Աստուած հարցըն մերոց»:
բ. «Որ հրեշտակակերպ տեսլեամբ արիաբար պատերազմեալ
զքարկոծումըն յանձն էառ.
խոստովանելով ըղքեզ Քրիստոս Աստուած...»:
գ. «Որ անպարագրելի աստուածութեանդ տեսող և բարեխօս իր ուխտաւորաց,
այսօր յիշատակաւ սրբոյն Ստեփաննոսի
գովեմք ըղքեզ Քրիստոս...»:
դ. «Որ յերկնային կօրացըն միշտ օրհնի Քրիստոս աստուած,
այսօր յիշատակաւ սրբոյն Ստեփաննոսի
ըղտէր օրհնեցէք և բարձր արարէք...»:
ե. «Հրաշալի աստուածաբանութեամբ սրբոյն Ստեփաննոսի,
քահանայք ընդ վերին կօրացն երկնից
զՔրիստոս գովեցէք...»:

Հայաստանյայց Եկեղեցվո գեղեցիկ ու շքեղագույն շարականներից մեկն է այս, իբրև գեղարվեստական խոսքի և մեղեդու կարմանալի մի միասնություն: Ասենք նաև, որ մեր Շարակնոցում ընդամենը չորս հարցեր կան, որոնք հորինված են ԳՁ դարձվածի ծանր այս եղանակով, դրանք են՝

Փրկչի հրաշափառ ծննդյան կանոնի հարցը («Անըսկիզբն էակից բանըդ Հօր»).

Մեծի ուրբաթի կանոնի հարցը («Իջեր յերկնից անըսկիզբն Որդի»).

Հակոբ Մծբնա Հայրապետի կանոնի հարցը («Սուրբ ես տէր»).

Ստեփաննոսի կանոնի հարցը («Ընդ երկնային»):

Այս հարցերը թեև ԳՁ դարձված ձայնեղանակով են հորինված, սակայն յուրաքանչյուրն ունի նյութի և բանաստեղծական խոսքի ինքնատիպ նկարագիր, ինչպես նաև մեղեդային որոշակի ինքնուրույն զարգացում, Ստեփաննոսի կանոնին մաս կազմող մնացած երգերը բոլորն էլ ունեն ընտիր ու վսեմ ոճ և կազմում են մի ամբողջություն՝ մի կատարյալ և անկրկնելի կանոն՝ Նախավկա Սարկավագի հավիտենական հիշատակին արժանի:

Կանոնի և նրա երգերի համար աղբյուր է հանդիսացել «Գործք առաքելոց» գրքի է գլխում եղած գեղեցիկ և հուզիչ պատմությունը:

Սակայն յուրաքանչյուր երգի տողում մենք տեսնում ենք շարականագիր Հայրապետի բանաստեղծական նրբագույն ճաշակը, նրա աստվածաբանական ու դավանաբանական խոր հմտությունը:

գ. «Կանոն գլխաւոր առաքելոցն Պետրոսի և Պողոսի»

Գ. Օրհ. ԴՁ. «Ցնծայ այսօր եկեղեցի աստուծոյ...»

Մեծ. ԴՁ. «Աստուածածին գերագոյն երկնից...»

Հրց. ԴՁ. «Որ խոստացար տալ ըզփականըս...»

Ողր. ԴՁ. «Ամոլըք հաւատոյ...»

Տր. ԴՁ. «Երանելի սուրբ Առաքելքն...»

Մնկ. ստ. ԴԿ. «Որ արփիահրաշ լուսոյ ծագմամբ...»

Հմբ. ստ. ԴԿ. «Որ անպարագիրն է յէութեան...»:

Մինչև կանոնի երգերի քննարկմանն անց-

[16] Սղմ. ՃԼԲ. 11—12:

նելը, ուզում ենք մեջբերել Կ. Գանձակեցու վկայությունը այս և «Որդւոց որոտման» կանոնի մասին, ըստ որում՝ «Պետրոսի և Պողոսի օրհնութիւնն և մանկունքն և համբարձին որոշ սկիզբն է այս. «Ցնծա՛ այսօր եկեղեցի Աստուծոյ յիշատակաւ սուրբ առաքելոցն»... և «Որդւոցն որոտման օրհնութիւն՝ «որ էն յէութեան որդի միշտ էէն...»[17] հորինել է Ներսես Շնորհալին:

Ինչպես արդեն ասացինք մեր հոդվածի սկզբում, մենք հենվում ենք եկեղեցական ավանդության վրա, և այդ տեսանկյունով էլ ավագ տոների կարգը վերագրում Օձնեցու գրչին: Հնարավոր է, որ Շնորհալին ամբողջացրած լիներ հիշյալ չորս կանոնները և կամ հորինած լիներ մի նոր օրհնություն կամ կանոնի երգերից մեկը կամ մի քանիսը:

Այժմ քննենք Պետրոսի և Պողոսի կանոնը:

Կանոնի օրհնության մեջ շարականագիրը հավատացյալներին հրավիրում է մասնակցելու գլխավոր առաքյալների՝ Պետրոսի և Պողոսի մեծահանդես տոնախմբությանը:

Ե՛վ օրհնության, և՛ հարցի մեջ հեղինակը մասնավորաբար շեշտում է Պետրոսի գլխավորությունը առաքելական խմբի մեջ, անվանելով նրան՝ «վէմ հաւատոյ», «վէմ անվանելի ի դրանց դժոխոց», «գլուխ սուրբ հաւատոյ, հիմն եկեղեցւոյ»: Պետրոսի գլխավորության մասին Ավետարանից վկայակոչված այս անվանումները, որ կատարել է սրբազան շարականագիրը, ի չարս են օգտագործվել Մխիթարյան մի քանի հայրերի կողմից: Այսպես, հայր Միքայել Չամչյանը իր «Պատմութիւն հայոց» ստվարածավալ և արժեքավոր աշխատության Բ հատորում ավելի քան 100 էջ է տրամադրել Հովհան Օձնեցու կյանքին ու գործունեությանը, անդրադարձել է նաև Օձնեցու շարականներին, նպատակ ունենալով ապացուցելու՝

«Թէ սա ոչ երբէք հակառակ ինչ գրեալ է ընդդէմ Քաղկեդոնի սուրբ ժողովոյն...»:

«Իսկ զորս խօսի սոյն այս Յովհան Հայրապետ ի շարականի վասն գլխաւորութեանն Պետրոսի՝ առաւել է քան զամենայն, և մարթ է ասել՝ թէ ո՛չ ոք ի Հայրապետաց այնչափ մեծացուցեալ իցէ զիշխանութիւն Պետրոսի, որպէս սա՛ յասելն զնմանէ. «Որ զէութիւն անճառելոյ միածնին՝ յայտնութեամբ Հօր ի վերուստ դաւանեալ, և երանականն արժանացեալ շնորհի, վէմ անվանելի ի դրանց դժոխոց...»[18]:

Չամչյանը տասը **հոդվածների** միջոցով ի վերջո հանգում է այն եզրակացության, թէ՝ «Յովնան Հայրապետ, յաջորդն Եղիայի, ունէր զդաւանութիւն Քաղկեդոնի սուրբ ժողովոյն, և միաբան էր ընդ քաղկեդոնականս, և թէ ոչ եղև նա բարձող ջրոյն ի պատարագէ...»[19]:

Բավմավաստակ պատմաբանը իր ասելիքն ավելի համոզիչ դարձնելու համար վկայակոչում է Կղեմես Գալանոսի խոսքերը Օձնեցու մասին:

Գալանոսի թունալից խոսքերը չենք ուզում կրկնել այստեղ, որովհետև դրանք խիստ անպարկեշտ արտահայտություններ են, և մեր նյութի սահմաններից դուրս է անդրադառնալ այդ հարցին:

Սակայն, «Քաղկեդոնի սուրբ ժողովի դավանություն ունեցող» այս Հովհան Հայրապետի ջանքերով էր, որ վերացավ այդ պիղծ աղանդի գոյությունը հայոց մեջ, որն սկիզբ էր առել դեռևս Եզր կաթողիկոսի օրոք: Այս հարցի շուրջ մեր խորհրդածություններն ուզում ենք ամփոփել Ստ. Օրբելյան պատմիչի հետևյալ տողերով.

«...Զի հայք կացին ի նոյն յաղանդն յաւուրս 6 կաթողիկոսաց ամս 85, մինչ ի բազմերջանիկ և գովելին զաւակն զարդու սուրբ եկեղեցւոյ Յովհան Օձնեցին, և ի ձեռն նորա սրբեալ և նորոգեալ եղեն հայք յայնմ աղանդոյ»[20]:

Այժմ վերադառնանք Պետրոսի և Պողոսի կանոնին:

Եթե օրհնության և հարցի մեջ շարականագիրը հիմնականում Պետրոսի գլխավորության խնդիրն է շեշտում, այլ է պատկերը կանոնի մյուս երգերում: Այստեղ արդեն խոսվում է երկու գլխավոր առաքյալների ավետարանական գործունեության, նրանց նահատակության ու Քրիստոսին խաչակից լինելու և այլ հանգամանքների մասին:

Ուշադրության արժանի են հատկապես կանոնի մանկունքն ու համբարձին: Մանկ. Դկ. ստ.

«Որ արփիահրաշ լուսոյ ծագմամբ
պայծառացոյց ըստիեվերս անճառապէս լոյսն,
որ ի Հօրէ առաքեցաւ առաքելական քարոզութեամբ
սրբոյն Պետրոսի, հրաւիրելով ի լոյսն անրստուեր»:

Մանկունքի բոլոր երեք տներում հեղինակը խոսում է Պետրոսի մասին: Իսկ համբարձին, որը գրեթե շարունակությունն է մանկունքի, բացառապես վերաբերում է Պողոսին:

---

[17] **Կ. Գանձակեցի**, Պատմ. հայոց, Երևան, 1961, էջ 119:

[18] **Մ. Չամչյան**, Պատմ. հայոց, Բ հատոր, էջ 576:

[19] **Մ. Չամչյան**, Պատմ. հայոց, Բ հատոր, էջ 576:

[20] **Ստ. Օրբելյան** — Պատմ. նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 119;

Հմբ. ԴԿ. ստ. ա. Որ անպարագիրն է յէութեան,
պարածածկեալ արփիափայլ ճառագայթիւք լոյսն,
որ պայծառ քան վարեգակն արտափայլեալ շուրջանակի սրբոյն Պօղոսի,
հրաւիրելով ի լոյսն անընտուեր:
բ. Որ գերագոյն քերովբէից վերհամբարձեալ
ի յերրակի խորանս երկնից
և հրահոսան վըտակացն արբմամբ ըզմայլեալ,
երրորդութեանն արժանաւորելով տեսլեան **սուրբըն Պօղոս...**

Առաջին իսկ հայացքից կարելի է նկատել, որ այս երկու գոհար շարականները միևնոյն հեղինակի հորինումներն են, երկուսի մեջ էլ միևնոյն պատկերները, լեզվական և ոճական նմանությունները՝ բարձրացված գեղարվեստական խոսքի պատշաճ մակարդակի:

Հեղինակի լեզուն վսեմ ու մաքուր է, գեղեցիկ է ու հարուստ՝ ճոխացած բանաստեղծական արվեստի սքանչելի ու հորդահոսուն պատկերներով, համեմատություններով ու պարմանալի գյուտերով:

Կանոնի երգերը հորինված են ԴՁ և՛ պարզ, և՛ դարձվածներով, բացի մանկունքից և համբարձիից, որոնք ԴԿ ստեղի եղանակներ ունեն:

Ամենայն հավանականությամբ այս և սրանց նման գեղեցկահյուս մեր այլ շարականները նկատի ունի 12-րդ դարի մեր երանաշնորհ Հայրապետներից Գրիգոր Պահլավունին՝ Շնորհալու ավագ եղբայրն ու նախորդը, երբ վկայակոչում է եկեղեցական հայրերի բարձր կարծիքը Հայաստանյայց Եկեղեցվո հոգևոր երգերի և օրհնությունների մասին.

«Վկայեցին՝ եթէ ծանեաք՝ յերգս ձեր և յօրհնութիւնս, որ է շարականդ, որ առ Աստուած ճշմարիտ հաւատոյ ձերոյ ուղղափառ դաւանութեան»[21]:

Դ. դ. Կանոն որդւոցն որոտման՝ սրբոց առաքելոցն Յակովբայ և Յովհաննու.

Օրհն. ԴԿ. Որ էն յէութեան որդի միշտ յէէն.

Հրց. ԴԿ. Որ վամենայնքն յոչընչէ արարեր...

Մեծ. ԴԿ. Աստուածածին ամպ լուսաւոր...

Ողր. ԴԿ. Որդիքն որոտման...

Տէր. ԴԿ. Հոգի իմ կանխէ.

Մնկ. և հմբ. ԴԿ. ստ. Որ յանընտուեր ի լոյսն...

«Որ էնն յէութեան որդի միշտ յէէն,
Անեղանելիդ ծնունդ հայրական,
վոր ի վերուստ հնչեցին որդիքն որոտման,
և յայտնեցին որդւոց մարդկան կծածկապէս խորհուրդ:
...Որ վանտեսդ յէից վլոյսդ անտանելի
պարագրեալ մարմնով ծածկեցեր,
վոր ի լերինն արտափայլեալ տեսին որդիքըն որոտման,
և մաքրեցան անճառ տեսլեամբ գերապանծ լուսոյն...»:

Կանոնի օրհնության այս տներում, ինչպես նաև մյուս երգերի մեջ շարականագիրը խոսում է Փրկչի մարդեղության գաղտնածածուկ խորհրդի մասին, խորհուրդ, որն անհասանելի և անըմբռնելի էր մարդկանց համար, ըստ որում՝ Որդին, որ էակից էր մըշտընջենական Հօր և անեղ ծնունդն էր հայրական», աստվածային տեսչությամբ դրան ականատես եղան որդիքն որոտման և հայտնապես քարոզեցին աշխարհին այդ խորհուրդը:

Հակովբոս և Հովհաննես տեսան նաև գերապանծ լույսը Թաբոր լեռան վրա՝ Քրիստոսի պայծառակերպության պահին և մաքըրվեցին այդ գերապանծ լույսի անճառ տեսլյամբ:

Կանոնի յուրաքանչյուր երգի տողերի մեջ արտափայլում է շարականագիր Հայրապետի բանաստեղծական նուրբ ու բարձր ճաշակը, Սուրբ Գրքի, Եկեղեցու, աստվածաբանական ամենաբարդ խնդիրների մասին նրա ունեցած խոր հմտությունը:

Նորից ու նորից նա հիացնում է իր լեզվի պարզությամբ, սահունությամբ, մաքրությամբ, գեղեցկությամբ ու ճոխությամբ:

«Որդւոց որոտման» կանոնն աչքի է ընկնում նաև մեղեդային կուռ ամբողջականությամբ: Կանոնի բոլոր երգերն անխտիր հորինված են վերջձայն (ԴԿ) ձայնեղանակի ամենագեղեցիկ դարձվածներով: Այս տեսակետից առանձնապես ախորժալուր է կանոնի «Տէր յերկնից»-ը.

«Հոգի իմ կանխէ առ քեզ, Աստըուած,
որ ծագեցեր ըվլոյս հրամանի քո յաշխարհս
ընտրելովք քո առաքելովք,
վասըն սոցա, կեցո՛ ըզմեզ»:

Գեղեցիկ է նաև կանոնին իբրև մնկ. և համբարձի կցված ստեղին՝ «Որ յանընտուեր լուսոյն»... Այս ստեղիի լեզուն նույնպես հարուստ է ու պատկերավոր: Բոլոր երեք տներում շարականագիրը բանաստեղծական մեծ արվեստով ներբողում է Հովհաննես ավետարանչի սքանչելի ու նրեշտակակերպ նկարագիրը՝ համեմատելով նրան կրակում մաքըրված ոսկու հետ, իսկ սրբերի մեջ նա լուսապարդված է, ինչպես արեգակը՝ աստղերի մեջ:

Մնկ. Ստ.

[21] Գ. **Ավետիքյան**, Բացատր. շարականաց. ԺԳ:

ԴԿ. «Որ յանըստուեր ի լուսոյն ընկալար
ըվծագումըն շնորհաց, ո՛վ երանելի
տէր Յովհաննէս, և հրաշալարդ գըտար
յերջանիկ դասս առաքելոցն.
Հայցեա՛ ի Տեառնէ պթողութիւն յանցանաց...
Որ փարեցար ըվսարսափելի պարանոցաւն
վանմատոյց ի լուսոյն, և մաքրեցար որպէս
կոսկի,
ի հուր, լուսավարդեալ երևեցար ի մէջ սըրբոցն,
որպէս յաստեղս՝ արեգակն. հայցեա՛...
Որ կենդանի աղբերէն արբեր ըվբղխումըն
շնորհաց,
եւ ի թևս հոգւոյն, հոսեր յանիմանալին.
աւետարանեցեր մըշտընջենաւորակից Հօր
վեակից Որդին. հայցեա՛...

Ահա չորս մեծ տոների կարգը, որը եկեղեցական ավանդությունը, ինչպես նաև մատենագրական արժանահավատ աղբյուրները հնուց ի վեր վերագրել են Հովհան Օձնեցի իմաստասեր Հայրապետին, որն իր հովվապետության 11 տարիների ընթացքում ամենայն նախանձախնդրությամբ և համարձակ ձեռներեցությամբ հոգ է տարել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո պաշտամունքային կարգավորությանը՝ ոչ միայն արմատավորել է ու կայունացրել կանոնի կարգը մեկանում, այլ նաև հորինել կամ **վերերգել** է տերունի ու սրբոց տոների համար պատշաճ երգեր ու շարականներ:

Հովհան Մանդակունի Հայրապետից հետո, Օձնեցին է վերստին կարգավորել ու խմբագրել մեր Շարակնոցը, որը քիչ փոփոխություններ չի կրել մինչև Ներսես Շնորհալի Հայրապետի օրերը: Շնորհալին նոր կանոններով ու բազմաթիվ հոգեվմայլ երգերով ու շարականներով ճոխացրել և ապա նորից խմբագրել է Շարակնոցը, որի վերջին կարգավորությունը կատարել է Գր. Տաթևացի տիեզերալույս վարդապետը:

Մեծ է Օձնեցու հեղինակությունն ու հմայքը Հայաստանյայց Եկեղեցվո ուղղափառ վարդապետության, Հայ Եկեղեցվո պատմության և հայ մատենագրության մեջ:

Հայաստանյայց Եկեղեցին իր ազգային սրբերի կարգին է դասել Օձնեցի Հայրապետին և նրա հիշատակը տոնախմբում է քառասնորդական պահոց չորրորդ շաբաթ օրը՝ Յովհան Որոտնեցի և Գրիգոր Տաթևացի մեծ վարդապետների հետ միասին:

Հետաքրքիր է նշել նաև, որ Օձնեցու տոնի համար հորինվել է հատուկ մի մանկունքի շարական ԴՁ. որը, սակայն, հետագայում համարվել է պարականոն և դուրս է մնացել կանոնական շարքից: Բայց այդ շարականի միայն առաջին տունն է Օձնեցի Հայրապետին վերաբերում, իսկ հաջորդ երկու տները ձոնված են Հովհաննես առաքյալին: Ահա այդ շարականը.

Մանկ. ԴՁ.

Շարական սուրբ առաքելոյն Յովհաննու և Օձնեցւոյն[22]:

«Ծագումն արևու արևելեան ճառագայթ
ի տան Թորգոմայ, ի գերապանց լուսոյն
մեկ առաւօտ սուրբ Յովհաննէս.
ջահ անշիջանելի Հայոց Հայրապետ...»:

Օձնեցու վարքի մասին առանձին օր է տրամադրված նաև «Յայսմաւուրք»-ում՝ ապրիլի 17-ին, և վերջապես Օձնեցին հիշատակված է նաև ձեռնադրության մաշտոցում, որտեղ ձեռնադրող եպիսկոպոսը ընծայյալին սրբոց թարգմանչաց վարդապետաց աշակերտելու պարտադիր խոստովանությունից հետո ավելացնում է. «Աշակերտիս սրբոյն Յովհաննու Օձնեցւոյն, Յովհաննու Որոտնեցւոյն և աշակերտի նորին Գրիգորի Տաթևացւոյն»[23]:

Այսօր, ավելի քան 12 երկար ու ձիգ դարեր են անջրպետում մեկ Օձնեցի փառավգյաց Հայրապետի դժվարին ժամանակներից: Հայաստանյայց Եկեղեցին և հայ ժողովուրդն անցած այդ դարերի ընթացքում ենթարկվեցին բազում ծանր փորձությունների, սակայն միշտ հավատարիմ մնացին, աշակերտեցին և հետևեցին Օձնեցուն և երջանկահիշատակ սուրբ հայրերի լույս հավատքին ու տեսիլքներին, նրանց անպարագրելի հայրենասիրության ու աստվածահաճո գործին:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

---

[22] **Ս. Ամատունի**—Հին և նոր պարականոն անվաւեր շարականներ, 1911, էջ 156:

[23] Յայսմաւուրք, էջ **ԵՃԺԵ**: